

որով կը կնքէր իր գրուածիւնները: 1107 ին Պաղատին Թաբորի եկեղեցւոյն ընծայեց նոր պարզե մը: Լատին վանքը ունէր երկու եկեղեցիներ — Ս. Փրկչի եւ Մովսէսի: Շատ հոռի չըլլալով՝ հին եկեղեցիին մօտը յունական վանք մը կար յանուն Ս. Եղիայի: Ի յիշատակութիւն Այլակերպութեան կառուցուած այս երեք եկեղեցիներն են՝ որոնց այցելեցին Sæwulf 1103 ին, և 1113 ին՝ Դանիէլ ոռու վանականը:

1113 ին Խորասանէն եկած արկածախնդիր աւազակներ, հաւառակ զինուորական պաշտպանութեանց, աւերեցին Գալիլիան, Թաբորը կողոպտեցին, և սպաննեցին կրօնաւորները: Երբեմն Ara Coeli վանքին մէջ (ի Հոռովմ) պահուած ժե. գարու ձեռագիր մը կ'ապահովէ — չի գիտցուիր ո՞ր աղբիւրներու համաձայն — թէ այս կրօնաւորները գերմանացիներ էին, և թէ զոհերուն թիւն էր 72: Յովհաննէս Փոկաս 1185 ին այցելեց եկեղեցիները և նշանակեց պղնձէ այն վանդակները (chancels) որ շրջապատած էին դասը, կեդրոնը, սեղանին առջև: Խաչով մը նշանակուած սպիտակ մարմարէ բոլորակ քարայտակ մը ցոյց կու տար ճիշդ այն տեղը՝ ուր Գրիստոս այլակերպած էր:

1187 ին Սալահէտտինի բանակը կործանեց եկեղեցիները եւ վանական հաստատութիւնները: Կրօնաւորները ցրուեցան Անտիոք, Աքքեա և այլուր: 1228 ին Յրէտէրիկ Բ. Թաբորի վրայ եկեղեցի մը նորոգեց, բայց ան չկրցաւ գտնել իր նախկին պայծառութիւնը: 1263 ին Պիպարս վերջնականապէս քանդել տուաւ վերաշինուած հաստատութիւնները: Նոյն թուականէն մինչեւ 1745 Թաբոր աւերակոյտ մ'էր. այցելող ամէն ազգի ուխտաւորները տխուր շեշտերով և սրտի բեկումով կ'արձանագրեն Ս. Լեւրան վրայ տիրող ամայութիւնը և այրեացաւեր վիճակը: ԺՍ. գարու վերջն էր որ Յրանչիսկեանք շինեցին իրենց նոր եկեղեցին հին սրբավայրին տեղւոյն վրայ (Camille Enlartի, Les Monuments des Croisés. Բ. Հար. էջ 380-385):

Բ. — Թաբոր լեւրան կրօնական յիշատակարաններու գլխաւոր աւերակները կեդրոնացած են սարահարթին արեւելքը, քառակուսի շրջափակի մը մէջ: Հոն մտած ժամանակ, ձախին կը գտնուէին մնացորդները փոքր եկեղեցիի մը որուն պատերը տակաւին կանգուն են մէկէն մինչև երկու մէթր բարձրութեամբ: Այս ա-